

Ինչպէս կանխեցինք վերև ըսելու, Ազիզիյէի Ազգ. Գերեզմանատունը առանձին հողամաս մը չի ներկայացներ եւ հետեւաբար դարերէ ի վեր հոն ամփոփուող մեռելները խառնիխուռն ցրուած են երեք մասերուն մէջ ալ: Վիճակը նոյնն է քրիստոնեայ հասարակութեանց համար. այնպէս որ չափազանց դժուարին աշխատանք է, այս ընդհանուր խառնակ վիճակին մէջ, և այսքան ընդարձակ տարածութեան վրայ մի առ մի գտնել ու արձանագրել հայերէն բոլոր տապանաքարերը: Այսուհանդերձ կարելի եղաւ 200 է աւելի հայերէն տապանաքարերու արձանագրութիւնը կատարել: Ամենահին թուականը՝ որուն հանդիպեցանք, 1581ն է: Անկասկած որ եղած են աւելի շատ տապանաքարեր որոնք անհետացած են ժամանակի մաշկեցող անիւրն տակ, մանաւանդ երբ նկատի ունենանք որ անընդհատ երեք հարիւր տարի գերեզմանատները չըջապատ չունենալով ոտքի կոխան եղած են: Ստուգած ենք նոյնպէս որ բազմաթիւ տապանաքարեր ժամանակի ընթացքին այլուր փոխադրուած և նոյնիսկ չինութեանց համար ալ գործածուած են: Այսպէս, Ս. Քառասնից եկեղեցւոյ շրջափայտի ներսէսեան վարժարանի պատերուն մէջ տեսած ենք նման տապանաքարեր: Սալիպէ թաղին կից Հարթ Զէպպալ թաղի քրիստոնեայ տան մը բակին մէջ փոխադրուած է նոյնպէս Տէր Թէոգորոս քահանայի տապանաքարը: Նկատելի և շատ յատկանշական պարագայ է տապանաքարերու գրեթէ ամենամեծ մասին միայն հայերէն գրուած ըլլալը:

Իբր ընդհանուր նկարագիր հաղոր-

դենք որ Ազիզիյէի Ազգ. Գերեզմանատան տապանաքարերը գրեթէ միօրինակ են. տեղական պարզ կամ դեղին ընտիր քարէ շինուած: Կոթողի կամ մահարձանի ձևով ուրէ տապանաքար գոյութիւն չունի հոն. բոլորն ալ հորիզոնական զիրքով գրուած են, անջատ անջատ, և բոլորին արձանագրութիւնը խորաքանդակ է: Քարերը առհասարակ իրարու կը նմանին, միակտուր են, 12—15 սնդմ. զեանէն վեր բարձրութեամբ. 50—60 սնդմ. լայնութեամբ և առհասարակ 80—100 սնդմ. երկարութեամբ: Մեծագոյն մասը ամրացուած են չաղախով և ցած պատուանդանի վրայ, գրեթէ անտեսանելի: Երկրորդ բաժնին մէջ, հիւսիսային թաղամասերը ունին աչքաուտ տապանաքարեր, առհասարակ զեղին կճեայ մարմարէ, որոնք զեղարուեստական սիրուն ծաղկումներ ունին եզրերուն վրայ և կը կրեն խնամուած արձանագրութիւններ: Այս կարգի տապանաքարերը ծաւալով աւելի մեծ են և միւսներէն աւելի բարձրադիր, որոնց մէկ երկու զեղեցիկ նմոյշները յատկապէս արտագրած ենք մեր ներկայ հատորին համար:

Ազիզիյէի տապանաքարերու մեր արձանագրութիւնը կատարուած է 1581 էն սկսեալ մինչև 1850 թուականը կրող տապանաքարերու վրայ միայն. այդ թուականէն ստղին կան խիստ բազմաթիւ տապանագրեր, որոնց արձանագրութիւնը զանց ըրած ենք, վերջին ժամանակներու յատուկ ըլլալով, մանաւանդ որ Ազգ. Առաջնորդարանը կը պահէ 1850էն ստղին՝ մահագրութեանց բաւական խնամուած արձանագրութիւնը: